



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոտեղերնութարանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2022


Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակ

*Տեղեկագիրը կազմել է ագրոտեղերնութարանության բաժինը՝
մասնագիտացված ագրոտեղերնութարանական կայաններից ստացված
տեղեկատվության հիման վրա:*

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրեկյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՂԵՐԵՎՈՒԹԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոկտեմբերի երկրորդ փասնօրյակում օդի օրական միջին ջերմաստիճանը հանրապետության զգալի շրջաններում եղել է նորմայի սահմաններում, տեղ-տեղ՝ 1 աստիճանով բարձր:



Տասնօրյակային ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է 20-ին. Տավուշում՝ +21...+24°C, (Դիլիջան՝ 26°C) Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +25...+28°C, նախալեռնային շրջաններում՝ +23...+26°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +19...+21°C, նախալեռնային շրջաններում՝ +26...+28°C, Շիրակում՝ +17...+22°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +19...+20°C, նախալեռնային շրջաններում՝ +22...+24°C, Լոռիում՝ +19...+23°C, Գեղարքունիքում՝ +16...+21°C, Արմավիրում՝ +25...+26°C, Արարատում՝ +23...+25°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +21...+25 °C, լեռնային շրջաններում՝ +17...+20°C:

Օդի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 12,13,19-ին. Տավուշում +4...+6°C (Դիլիջան՝ +2°C), Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +8...+10°C, նախալեռնային շրջաններում՝ +4...+5°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 0...+1°C, նախալեռնային շրջաններում՝ +5...+7°C, Շիրակում՝ +1...+3°C (Աշոցք՝ -3°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 0...+3°C, նախալեռնային շրջաններում՝ +6...+8°C, Լոռիում՝ -3...+1°C Գեղարքունիքում՝ -2...+3°C, Արմավիրում՝ +4...+9°C, Արարատում՝ +7...+8°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +6...+8°C, լեռնային շրջաններում՝ -1...-6°C:


Տասնօրյակային տեղումներ



Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 9-20մմ (68-156%), Լոռիում՝ 16-20մմ (118-145%), Տավուշում՝ 17-29մմ (89-180%), Արագածոտնում՝ 4-19մմ (38-112%), Գեղարքունիքում՝ 3-14մմ (30-112%), Կոտայքում՝ 5-9մմ (42-49%), Արմավիրում՝ 5-6մմ (75-91%), Արարատում՝ 1-4մմ, (22-70%), Վայոց ձորում՝ 1-9մմ, (12-25%), Սյունիքում՝ 2-10մմ (21-53%), Կապանում և Մեղրիում տասնօրյակի ընթացքում տեղումներ չեն դիտվել:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում գրանցվել է 0...-4°C, նախալեռնային և հովտային շրջաններում՝ 0...+4°C, Մեղրիում՝ +8°C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Օդի միջին հարաբերական խոնավությունը լեռնային և նախալեռնային շրջաններում կազմել է 68-89%, հովտային շրջաններում՝ 58-67%:

Օդի նվազագույն հարաբերական խոնավությունը լեռնային և նախալեռնային շրջաններում կազմել է 51-70%, Արարատյան դաշտում՝ 23-40%:

Վեզետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ

Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները

Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում շարունակվել են գյուղատնտեսական աշխատանքները:

Լեռնային և նախալեռնային շրջաններում աշնանացան ցորենը ծլել է, առանձին նախալեռնային շրջաններում առաջացել է երրորդ տերևը, շարունակվել է կարտոֆիլի, կաղամբի, հնդավորների բերքահավաքը:

Հովտային շրջաններում բազմամյա միջին արժեքներին մոտ սկսվել է աշնանացան ցորենի նախացանքի աշխատանքները, պողպատի այգիներում կատարվել է հերթական սնուցող ոռոգում:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել դաշտային աշխատանքների իրականացման և բերքահավաքի համար:

